



ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 նոյեմբեր, 2023 թվականի № 68-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ», «ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽ ԱՌԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 92-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետը և հաշվի առնելով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն», «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» և «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունների 2023 թվականի ֆինանսատնտեսական գործունեությունը անկախ աուդիտի ենթարկելու անհրաժեշտությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2023 թվականի ֆինանսատնտեսական գործունեության անկախ աուդիտ անցկացնելու վերաբերյալ մրցույթ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:
2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2023 թվականի ֆինանսատնտեսական գործունեության անկախ աուդիտ անցկացնելու վերաբերյալ մրցույթ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:
3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2023 թվականի ֆինանսատնտեսական գործունեության անկախ աուդիտ անցկացնելու վերաբերյալ մրցույթ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

16 նոյեմբեր, 2023 թվականի

ք. Երևան